ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 107.5% (2018թ. հունվար-նոյեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.6%, իսկ 2017թ. հունվար-նոյեմբերին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.2%):

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,856,087.0 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 292,688.5 և 364,711.5 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 344,776.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 9,030.2 և 20,218.1 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2,863,299.3 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 292,705.5 և 590,822.4 մլն. դրամով, իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,847,564.8 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 264,292.4 և 536,376.4 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 109.3% (2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.1%-ի և 112.3%-ի պարագայում):

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 104.5% (2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.5%-ի և '100.3%-ի պարագայում):

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվում է եռամսյակային կտրվածքով

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 109.2%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.2%-ի և 114.4%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 114.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.4%-ի և 114.2%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 323,458.2 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 50,011.4 և 17,768.8 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,281,312.5 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 249,354.2 և 350,102.5 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 228,199.2 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 6,210.4 և 3,102.7 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 23,117.1 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 466.7 և 57.1 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ կազմել է 123.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 85.7%-ի և 113.0%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 108.2%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.6%-ի և 115.5%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 99.1%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.9%-ի և 101.0%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 97.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.3%-ի և 109.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ




Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 436,065.8 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 85,355.1 և 175,672.1 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 243,078.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 23,197.7 և 34,464.1 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 395,547.7 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 65,621.1 և 121,346.2 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 121.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 134.0%-ի և 122.7%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 110.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.9% և 105.2%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 116.3%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.3%-ի և 119.8%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 101.5%, 2018թ. հունվար-նոյեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.6%, 2017թ. հունվար-նոյեմբերին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.8%:

ՍԳԻ-ն 2019թ.նոյեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 99.5%, 2018թ. նոյեմբերին 2017թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 100.3%, 2017 թ. նոյեմբերին 2016թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 101.1%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2019թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 830,905.0 մլն դրամ, ինչը 220,841.0 մլն. դրամով կամ 36.2%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 231,520.0 մլն. դրամով կամ 38.6%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 84749 մարդ, ինչը 2900 մարդով կամ 3.54%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2372 մարդով կամ 2.72%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 62086 մարդ, ինչը 3280 մարդով կամ 5.0%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 10056 մարդով կամ 13.9%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)

Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 7,231.7 մլն. դոլար, ինչը 497.3 մլն. դոլարով կամ 7.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,586.5 մլն. դոլարով կամ 28.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է -2,428.3 մլն. դոլար, ինչը 101.7 մլն. դոլարով կամ 4.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 793.0 մլն. դոլարով կամ 48.5%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2,401.7 մլն դոլար, ինչը 197.8 մլն. դոլարով կամ 9.0%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 396.7 մլն. դոլարով կամ 19.8%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 4,830.0 մլն դոլար, ինչը 299.5 մլն. դոլարով կամ 6.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,189.7 մլն. դոլարով կամ 32.7%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման աճը ներմուծման աճի նկատմամբ արձանագրել է առաջանցիկ տեմպ:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել է 178885 դրամ, ինչը 10086 դրամով կամ 6.0%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 10746 դրամով կամ 5.7%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40,154.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -3,239.4 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -36,914.7 մլն. դրամ: 2018 թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -54,480.2 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 83,667.3 և -32,187.1 մլն դրամ: 2017թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -141,227.5 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 135,000.5 և 6,227.0 մլն. դրամ:

* Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ